«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Անգլերեն

Ուսուցիչ՝ Հովսեփյան Գայանե

Ուսումնական հաստատություն՝ Դաշտադեմի մ/դ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------

1. **Ուսուցիչ-Ծնող համագործակցություն----------3**
2. **Ծնողների ներգրավվածությունը և դրա նշանակությունը ----------8**
3. **Հարցումներ ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ և ծնողների, և ուսուցիչների կողմից ներկայացված առաջարկություններ --------11**

Եզրակացություն----------**14**

Գրականության ցանկ----------**16**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի վարքի միայն լավ օրինակն առավել օգուտ է աշակերտին,
քան բազում դասերն առանց լավ օրինակի:
Անատոլ Ֆրանս

Ինչպես ասել է անգլիացի վիպասան և բանաստեղծ Շառլոթ Բրոնտեն. «Ամենամեծ գովեստն ուսուցչի համար այն է, երբ գովում են իր աշակերտին»: Առավել երջանիկ են այն ուսուցիչները, որոնց աշխատանքը գնահատում են իրենց աշակերտները: Ուսուցչի դերը շատ կարևոր է աշակերտի ձևավորման, կայացման և գիտելիքների ամբարման գործում:

Մարդու աշխարհայացքը, կենսակերպը որոշակի տարիքից ձևավորվում է մանկավարժ-ուսուցչի հոգևոր ու մտավոր ունեցած դերի անմիջական ազդեցությամբ: Ուսուցիչը իրագործում է բարդ և բազմակողմանի աշխատանք, որի հաջողությունը մեծապես պայմանավորված է ուսուցչի թե անձնային, թե մասնագիտական որակներով:

Մեզանում ուսուցիչը սովորաբար ընկալվում է որպես սովորեցնող՝ ակադեմիական գիտելիքը մեխանիկորեն փոխանցող անձ: Հաճախ նույնիսկ կիրառվում է ոչ թե ուսուցիչ, այլ դասատու բառը, այսինքն՝ ուսուցիչը ընկալվում է ոչ թե որպես սովորեցնող, տեսական և գործնական հմտություններ փոխանցող, այլ ընդամենը դաս տվող, վարժեցնող անձ: Ըստ էության, տեղի է ունեցել ուսուցչի դերի աղավաղում ծնողների, աշակերտների և լայն հասարակության ընկալումներում: Մինչդեռ ուսուցչի դերն ավելի բազմազան ու բազմաբովանդակ է, քան պարզապես դաս տվողի, ինչ-որ բան սովորեցնողի դերը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սովորողի ծնողի և ուսուցչի միջև կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությամբ է պայմանավորված հետազոտական թեմայի արդիականությունը, որն իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի անխափան իրականացման վրա:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության համար որպես խնդիր է սահմանվել ծնող-ուսուցիչ համագործակցությունը՝ կրթության որակի վրա ունեցող բացառապես դրական ազդեցության կարևորմամբ:

Հետազոտության նպատակը: Աշխատանքի նպատակն է թվարկել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը: Հայտնի աֆորիզմ կա. «Երեխաների հետ աշխատելու ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է»: Ընտանեկան դաստիարակությունն ընտանիքի ապրելակերպի

և ծնողների ամենօրյա նպատակասլաց ազդեցությունն է երեխայի վրա, այսինքն այն բարդ համակարգ է, որը իրականացվում է ծնողների և հարազատների կողմից կոնկրետ ընտանիքի պայմաններում:

1. Ուսուցիչ-Ծնող համագործակցություն

Սա հեշտ գործ չէ, բայց տեսեք, ինչ կարող եք անել...
Իմ որդին այնքան լավն է»
Աբրահամ Լինքոլն

Ուսուցման առաջին տարին կյանքի դժվարին շրջան է ոչ միայն աշակերտների, այլ նաև նրանց ընտանիքների և ծնողների համար: Իզուր չեն ասում որ ծնողները սովորում են երկու անգամ: Նախ՝ իրենք իրենց համար, ապա հետագայում նաև իրենց երեխաների հետ միասին: Ուսուցչի և ծնողի համագործակցությունը մեծ դեր է խաղում աշակերտի կյանքում: Ուսուցանելու գործընթացի ապահովման պարտականությունը պետք է ստանձնի դպրոցը, իսկ դաստիարակելու խնդիրները հարկավոր է լուծել միասին: Շատ կարևոր է ծնողների ներգրավվածությունը աշակերտի կրթական գործընթացում: Ծնողները կարող են հաղորդել այնպիսի տվյալներ, որոնք ուսուցչի համար դժվար կլինի ինքնուրույն, դասարանական միջավայրում կամ այլ ճանապարհով ձեռք բերել: Ծնող-ուսուցիչ համագործակցությունը կնպաստի աշակերտի զարգացման, ուսուցման կազմակերպման, համապատասխան միջավայրի ստեղծման, կրթական կարիքների բավարարման արդյունավետ ուղիների որոնմանը:

Կան ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների տարբեր խմբեր բացասական դրսևորմամբ.

- ծնողներ, ովքեր հանդուրժում են իրենց երեխայի վատ պահվածքը (հատկապես ուսուցչի հետ),
- ծնողներ, որոնց չի հետաքրքրում իրենց երեխայի դպրոցական գործունեությունը,
- ծնողներ, ովքեր չեն համագործակցում դպրոցի գործունեության և քարոզչության հետ,

- ծնողներ, ովքեր մեծ ակնկալիքներ ունեն իրենց երեխայից և ովքեր չեն կարողանում ընդունել իրենց երեխայի սահմանները, հետևաբար, երեխային քաջալերում են վատ պահվածքի կամ վատ դրսևորման համար:

Ներկայումս այսպիսի իրավիճակ է տիրում ամբողջ աշխարհում: Շատ դեպքերում ծնողները հաճախ գալիս են դպրոց՝ արտահայտելու իրենց բարկությունը ուսուցչի հասցեին, ով իրենց երեխային նշանակել է անհաջող գնահատական՝ պնդելով, որ իրենց երեխան ավելիին է արժանի:Ցավոք, այս ծնողները չեն հասկանում, որ իրենց համագործակցությունը անչափ անհրաժեշտ է երեխային հաջողության հասնելու համար: Նրանք չգիտեն, որ կարող են լինել իրենց երեխայի համար ավելի լավ ուսուցիչներ և կատարել հետևյալ քայլերը՝

- Պարբերաբար հարցրեք ձեր երեխային դպրոցի մասին - Երբեմն ուսուցիչները կարող են որոշ սխալներ թույլ տալ աշակերտների հետ վարվելիս, ուստի շատ կարևոր է, որ ծնողները իրենց երեխային հարցնեն, թե ինչ է կատարվում դպրոցում: Այս կերպ երեխան կարող է իրեն զգալ պաշտպանված, ինչը կօգնի երեխային դպրոցում զգալ մոտիվացված:
- Տրամադրեք ժամանակ իմանալու դպրոցի գործունեության և շահերի պաշտպանության մասին - Եթե դուք ծնող եք, ուստի պարտավոր եք իմանալ, թե ինչ է կատարվում դպրոցում, որպեսզի կարողանաք հետևել նաև ձեր երեխայի գործունեությանը: Երբեմն ծնողները գալիս են դպրոց՝ բողոքելով իրենց երեխայից ուշ տուն գալուց կամ հակառակը, երեխան պարզապես պատրվակ է դարձնում դպրոցը տանից դուրս գալու համար:
- Երեխաներին սովորեցնել հարգել իրենց ուսուցիչներին - Այն, թե ինչպես է ձեր երեխան վերաբերվում իր ուսուցչին, շատ բան է ասում այն մասին, թե ինչպիսի ծնող եք դուք: Դուք չեք կարող ակնկալել, որ ձեր երեխան կկիրառի կարգապահություն և հարգանք դպրոցում, եթե դուք ինքներդ տանը նրան դա չեք սովորեցնում: Համոզվեք, որ ձեր երեխան կսերտի այս կարևոր բաները, քանի որ դրանք կյանքում հաջողության հասնելու բազմաթիվ բանալիներից մեկն են:
- Համոզվեք, որ ձեր երեխան գիտի, որ վատ պահվածքը կարող է ունենալ վատ հետևանքներ - Նրանք պետք է հասկանան, որ կա համարժեք պատասխան և յուրաքանչյուր անընդունելի վարքագծի համար նրանք հաշվետու են իրենց արարքների համար:

Այս իրավիճակում համագործակցությունը խթանելու նպատակով, ուսուցիչների համար կարող է ուղեցույց ծառայել հետևյալ քայլերը, որոնք ուղղված են չհամագործակցող ծնողներին.

1. Փորձեք հաստատել վստահություն - Ծնողներին տեղեկացրեք դպրոցում տեղի ունեցող լավ և գովելի բաների մասին, որոնք երեխաները արել են դասարանում: Ծնողները հիմնականում չեն ցանկանում լսել սխալ բաների մասին և ստանալ հիասթափեցնող զանգեր և հաղորդագրություններ: Համոզեք նրանց, որ դուք նույնպես տեղեկացնում եք դպրոցի դրական դեպքերի մասին: Այսպիսով, նրանք կհասկանան, որ դուք ճիշտ եք կատարում ձեր պարտականությունները որպես իրենց երեխաների երկրորդ ծնող:
2. Հաստատեք ձեր հեղինակությունը - Վստահ եղեք ծնողների հետ առերեսվելու հարցում և ցույց տվեք նրանց, որ դուք եք այդ գործի լավագույն ջատագովը: Մի վախեցեք ծնողների հետ խոսել և միշտ գտեք ասելու երեխայի մասին այնպիսի բաներ, որոնցից նրանք տեղյակ չեն: Ծնողները դեռ զարմանում են, երբ նոր բան են իմանում իրենց երեխայի մասին, այնպես որ համոզեք ծնողին, որ դուք հետևողականորեն և ուշադիր եք ձեր աշակերտի առաջընթացի նկատմամբ:
3. Լսեք և կարեկցեք - Միշտ լսեք ծնողներին և անկեղծորեն ականջալուր եղեք նրանց ասածներին: Շատ կարևոր է տարանջատել նրանց ասածները և դրական արձագանքել ցածր ձայնով - «Ես շատ եմ ցավում, որ այդպես եղավ» բառերը շատ արդյունավետ են: Միևնույն ժամանակ օգտագործեք ՄԵՆՔ տերմինը և ստիպեք ծնողներին զգալ, որ իրենց երեխայի վատ պահվածքը շտկելը թիմային աշխատանք է՝ ձեր և նրանց միջև: Ստիպեք նրանց մտածել, որ դուք երկուսդ էլ միասին աշխատում եք ձեր բարձրացրած հարցերի շուրջ:

Դպրոց-աշակերտ-ուսուցիչ կապը աշակերտի կրթության որակի բարձրացման կարևոր նախադրյալն է: Ծնողներն ու մանկավարժները մշտապես պետք է համագործակցեն միմյանց հետ, քննարկեն ու վեր հանեն այն բոլոր գաղափարները, որոնք անհրաժեշտ է աշակերտին կրթության մեջ: Սովորողի դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը: Ուսուցիչ-ծնող համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- Բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,
- Մեծացնել փոխադարձ վստահության մակարդակը,
- Արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխազդեցության համակարգը,
- Ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ, նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝ դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ՝

- Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
- Ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
- Դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:

Ընտանիքները պետք է ներգրավվեն իրենց երեխայի կրթությանը վերաբերող կարևոր հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը, քանի որ ծնողներն ուզում են վստահ լինել, որ դպրոցը իրենց երեխային լիարժեք և համապատասխան ձևով է նախապատրաստում ապագա կյանքին: Այս խնդիրը հանդիսանում է կարևորագույներից մեկը՝ կրթության որակը բարելավելու գործում:

Ծնող-դպրոց, ծնող-ուսուցիչ, ծնող-մասնագետ համագործակցությունը խթանելու համար իրականացվում են՝

- Ծնողական ժողովներ՝ տարեկան առնվազն չորս անգամ,
- Դասալսումներ ծնողների կողմից,
- Դպրոցի բաց դռների օր, համատեղ տոնակատարություններ, միջոցառումներ,
- Համակարգված և պարբերական սեմինարներ, վերապատրաստումներ՝ ուղղված հատուկ կրթության չափորոշչի պահանջների լուսաբանմանը,
- Դպրոցի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում (ուսումնական չափորոշչի, ծրագրերի գրքույկներ, ուղեցույցներ ծնողների համար, տեղեկատու նյութեր, օրագրեր):
- Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները պարբերաբար կազմակերպել անհատական զրույցներ, ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը, ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:

Դպրոցի աշխատանքի վրա խիստ բացասական ազդեցություն են ունենում շրջապատում, հասարակության մեջ տեղի ունեցող անցանկալի երևույթները: Ուստի հարկավոր է ուժեղացնել դպրոց-ծնող կապը: Հանձնարարել դասղեկներին, որպեսզի անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը և տեղեկացված լինեն այն սովորողների մասին, որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարար պայմաններ:

Շատ կարևոր է նաև երիտասարդ սովորողների շրջանում հետևողական լինել

կործանարար գործունեության տարբեր ձևերի՝ ծայրահեղականության, ազգայնականության, ազգամիջյան հակամարտությունների, կրոնական աղանդների ներգրավածության, ինտերնետից և սոցիալական կայքերից կախվածությունների կանխարգելման նկատմամբ:

Ներկայումս թերի է ծնողների շրջանում տարվող մանկավարժական քարոզչությունը, ընտանիքի կողմից երեխայի նկատմամբ միասնական մեթոդամանկավարժական մոտեցումներն ու պահանջները: Փաստ է, որ ծնողները հետևողական են իրենց երեխաների իրավունքների պաշտպանության հարցում, բայց ոչ հետևողական են իրենց պարտականությունների կատարման մեջ:

Ուսուցիչները կարող են օգնել ծնողներին՝ առաջարկելով կարդալ կոնկրետ գրքեր, սովորող երեխաների մոտ դրականորեն ամրապնդելով ուսուցման տարբեր ուղիներ:

կարող է նաև առաջարկել քանի որ շատ ծնողներ լավ չեն տիրապետում մանկական գրականությանը:

Հետևողական իրենց պարտականությունները բարեխիղճ կատարող ծնողներին հարկավոր է՝

- Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած անհատական նախաձեռնությունների համար,
- Ըստ անհրաժեշտության՝ «հատուկ լսարաններում» ծնողների համար անցկացնել անհատական և խմբային խորհրդատվություններ,
- Ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառու ծնողներին, ամրապնդել ծնողական խորհրդի կապն աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ:

Ուսուցիչները պետք է հարգեն և ընդունեն ծնողների դերը՝ որպես հիմնական դաստիարակներ և օրինակելի մոդելներ: Որքան շատ ուսուցիչները խրախուսեն ծնողներին այս դերում, այնքան երեխան կշահի, և դասարանում ուսուցումն ավելի արդյունավետ կլինի: Ուսուցիչները կարող են դասասենյակ-տուն կամուրջ ստեղծելու նպատակով անել հետևյալ առաջարկությունները՝

- հանգստյան օրերին դասարանից տուն տեղափոխել կարդալու գրքեր, որպեսզի դպրոցում սովորածը տպավորվի նաև ծնողի մոտ,
- կարճ հոդվածներով հանդես գալ դպրոցական տեղեկագրերում կամ հոդվածներում,
- թույլ տալ սովորողներին դպրոցում պատրաստված գրքերն ու ալբոմները (բնության, ճամփորդության, գլոբուսի և այլ թեմաներով մշակված՝ համապատասխան նարազարդումներով) տուն տանել ,
- շաբաթական կամ ամսական մեկ անգամ թույլ տալ դպրոցին վերաբերող տեղեկագրերը տուն տանել:

Այս մեթոդը հնարավորություն կտա ծնողին պատկերացում կազմել սովորողի ջանքերի նկատմամբ ուսուցչի ակնկալիքների մասին:

2. Ծնողների ներգրավվածությունը և դրա նշանակությունը

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, սովորողն ունի ավելի բարձր առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպես կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը:

«Ծնողների ներգրավվածություն» նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն սովորողի առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում զավակների ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը.
- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.

- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.
- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.
- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով:

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում, ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ), նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և նրանք աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի: Վիճակագրական

տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:

Մասնավորապես՝

- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած մշակութային տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Նպատակներից մեկը, որի պատճառով էլ ծնողները խուսափում են դպրոցական կյանքին մասնակցել, դպրոցի հետ կապված որոշակի անհարմարավետությունն է, որը հաճախ պայմանավորված է նրանով, որ ծնողները չգիտեն՝ ինչպես ներգրավվեն նրա կյանքին: Դպրոցները, որոնք հոգ են տանում ծնողների համար դպրոցի ուսումնական գործընթացում ընդգրկվելուն, ակտիվորեն օգնում են ծնողին ընդգրկման մեթոդները սովորելու գործում: Ապացուցված է, որ ծնողների և երեխայի միասին կարդալու ակտիվությունը կարևոր արդյունքի է հասցրել լեզվական և կարդալու հմտություն-կարողության բարելավման տեսակետից մինչդպրոցական հասակից մինչև միջին դպրոցական հասակը:

Շատ դպրոցներում անցկացնում են սեմինարներ և իրականացնում են ծրագրեր ծնողների ընդգրկվածության հեշտացման համար և նրանց տեղեկացնում այն մասին, թե ինչ է տեղի ունենում դասասենյակներում: Օրինակ՝ դպրոցը կարող է ամեն ամիս կազմակերպել ընտանեկան ընթերցանության երեկոներ: Տարրական դասարանի ծնողները գնում են դպրոց, երեխաների հետ կարդում են և ուսուցիչների հետ զրուցում են ընթերցանության և ընթերցանության ռազմավարությունների մասին: Ռազմավարություններից մեկն էլ ուսուցչի կողմից ծնողների համար սպառիչ տեղեկության հաղորդումն է երեխաների դպրոցական առաջադիմության ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին: Ծնողին կոնկրետ տեղեկության հաղորդումը, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել աշակերտի աշխատանքի մեջ, հաղորդակցման տեսակետից առաջընթացի քայլ է: Դպրոցները պետք է

ոգևորեն ծնողներին և երեխաներին, որ նրանք պարբերաբար զրուցեն դպրոցում իրագործած ակտիվությունների մասին, միմյանց հաղորդեն գաղափարներ:

3. Հարցումներ ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ և ծնողների, և ուսուցիչների կողմից ներկայացված առաջարկություններ

Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջներն ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի:

Այս ամենն անհրաժեշտ է նրա համար, որ հնարավոր լինի կանխել հնարավոր բացասական սցենարները: Գաղտնիք չէ, որ դեռահասության տարիքի սովորողները հաճախ են ունենում բազմապիսի խնդիրներ, համացանցի հասանելիության պատճառով կարող են ունենալ նաև կիբեռխնդիրներ, որոնք ևս բավականին վտանգավոր են: Այս տեսանկյունից կարևոր ենք համարում սովորողների վարքի կամ ուսումնառության ամենաչնչին խնդրի դեպքում անգամ իրազեկել ծնողին: Ավելի նպատակահարմար է, որ ուսուցիչը տեղյակ պահի ծնողին, միասին քննարկեն ու լուծեն հարցը: Այսպիսով, թե' ծնողը, թե ուսուցիչը վստահ կլինեն, որ իրավիճակն իրենց վերահսկողության տիրույթում է:

Ստորև ներկայացնում եմ իմ կողմից կատարված հարցումների պատկերը, որն իրականացրել եմ 10 ծնողների շրջանում.

Հ/հ	Հարցերը	Այո	Ոչ այնքան	Ոչ
1	Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	10	-	-
2	Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	10	-	-
3	Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները երեխաների հետ	6	4	-
4	Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների եհտ	6	4	-
5	Գիտե՞ք, թե ձեր երեխան որտեղ է անցկացնում	6	4	-

	իր ազատ ժամանակը			
6	Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդություններից	4	6	-
7	Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման գործընթացում	-	10	-

Անկախ այն հանգամանքից, որ ծնողների մեծ մասը տրամադրում է ժամանակ երեխաների հետ ընդհանուր ժամանցի համար, կա լուրջ մտահոգություն երեխայի դաստիարակման գործընթացում դժվարությունների հաղթահարման գործում (1-ին և 7-րդ հարցերի ցուցանիշները): Խնդիրը 21-րդ դարի ապրելու այս ժամանակահատվածն է և սերնդի ազատ մտածողությունն է, ինչպես նաև ժամանակակից տեխնոլոգիաների և տեղեկատվության բարձր հասանելիությունը:

Դպրոցում ծնողները, մանկավարժները սերտորեն **պետք է** համագործակցեն, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքները մշտապես **պետք է** լինեն ծնողների ուշադրության կենտրոնում, ծնողական խորհուրդները պարտաճանաչորեն **պետք է** կազմակերպեն հերթական և արտահերթ նիստեր՝ ըստ անհրաժեշտության, ծնողները ակտիվորեն **պետք է** համագործակցեն դասղեկների հետ, կազմակերպեն ուխտագնացություններ, ճանաչողական այցեր, **պետք է** կազմակերպեն բացօթյա դասեր՝ անցկացնելով երեխաների հանգիստն ու ժամանցը:

Ծնողները ակտիվորեն **պետք է** համագործակցեն դպրոցի հետ նաև օնլայն տարբերակով, ինչն օգնում է հաղթահարելի դարձնել առօրեական դժվարությունները: արդյունքում ծնողը **պետք է** դառնա կրթական բարեփոխումների ջատագովն ու մասնակիցը:

Ստորև ներկայացնում եմ ծնողների շրջանում իմ կողմից ներկայացված «Ուսուցիչ-ծնող համագործակցության» հարցի վերաբերյալ առաջարկությունները, որոնք ըստ ծնողների ավելի կբարելավեն իրենց երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացը՝

1. Ցանկալի է դասավանդվող յուրաքանչյուր առարկա ունենար իրական գործնական աշխատանք:
2. Ցանկալի է ամեն օր, համաձայն գրաֆիկի, մեկ ծնող ներկա լիներ դասալսման:
3. Ցանկալի է դպրոցում անցկացնել հոգեբանական դասընթացներ, որոնց կմասնակցնեն և ծնողները, և երեխաները:
4. Ցանկալի է ծնողին տալ հնարավորություն, որպեսզի նա պատմի իրենց ընտանեկան ավանդույթների և սովորույթների մասին:

5. Ցանկալի է անցկացնել առանձին դասեր, որտեղ կտրվի ծնողին հնարավորություն ներկայացնելու իր տաղանդը կամ մասնագիտական որևէ հնարք (օրինակ՝ երգ, ուտեստի պատրաստում, գործիքի տիրապետում, սպորտ և այլն):
6. Ցանկալի է, որ ուսուցչի մոտեցումը բոլոր երեխաների հանդեպ լինի հավասարաչափ ասպեկտից՝ անկախ սոցիալական դիրքից, սեռից, ռասսայից, ընդունակությունից:
7. Ցանկալի է ուսուցիչ-ծնող կապը հիմնականում լինի անձնապես շփման տիրույթում, ոչ թե online:
8. Ցանկալի է, որ ուսուցիչը ավելի շատ ուշադրություն դարձներ երեխայի մեջ «Լավ մարդ» կերտելու գործընթացի վրա:
9. Ցանկալի է, որ ուսուցիչը առավել անկեղծ լիներ ծնողի մոտ երեխային ռեալ ներկայացնելու գործում, քանի որ յուրաքաչյուր ծնող համարում է, որ իր երեխան իդեալական է:
10. Ցանկալի է, որ ուսուցիչ-ծնող կապը լիներ առերես, ինչքան էլ որ դա ուսուցչի համար ֆիզիկապես դժվար է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասի գնացող ուսուցիչը աներևակալիորեն շատ բան պետք է կարողանա անել՝ փոխանցել գիտելիքներ և դրանց նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, արագ կողմորոշվել ամենաանկանխատեսելի իրավիճակներում, տիրապետել ժամանակի զգացողությանը, լինել հիանալի կազմակերպիչ, աչքի ընկնել նպատակասլացությամբ և էներգիայով, համբերատարությամբ և դիմացկունությամբ, լինել ներողամիտ և զգայուն, արդարամիտ և ոգևորված, հնարամիտ և սրամիտ:

Եթե ուսուցիչը խոսում է իրար հարգելու և սովորեցնում է, որ երեխաները հարգեն և սիրեն մեկը մյուսին, բայց ինքը որպես օրինակ չի ծառայում լինելու այդպես, դա երեխայի մոտ առաջեցնում է խաբվածության զգացում և անվստահություն ուսուցչի խոսքին: Ուսուցչի մեծագույն որակն է սիրել երեխաներին: Եթե ուսուցիչը գիտելիքների իմացության կոչ է անում, իսկ ինքը թույլ է իր առարկայից՝ վատ է: Եթե ուսուցիչը ազնվություն և վեհանձնություն է քարոզում, իսկ ինքը անարդար է, չար, վրեժխնդիր, նողկալի է:

Եվ մեկ շատ կարևոր հանգամանք ևս: Պետք է բարձրացնել ուսուցչի դերն ու նշանակությունը մեր հասարակության մեջ, որը ինչ ինչ պատճառներով այդքան իջել է: Կար ժամանակ, երբ միայն ուսուցչի անունը լսելիս՝ մարդիկ հարգանքով էին լցվում, իսկ ամենաաղմկոտ աշակերտները լռում էին: Ուսուցչի ճշմարիտ լինելուն ոչ մեկ չէր կասկածում: Այս փաստը այսօր շատերիս է հուզում: Պարզապես միշտ մեր մտքում պահենք այս խոսքերը, որ կյանքն ավելի բարձր է խոսում, քան խոսքերը և այդ ժամանակ մեծանում է պատասխանատվությունը, որ ուուցիչը հետևի իր կյանքին և խոսքերին, որպեսզի իր ասած խոսքը կշիռ ունենա աշակերտների կյանքում:

Հուսով եմ, որ այս հետազոտական աշխատանքը հիանալի ուղեցույց կարող է լինել ծնողների և ուսուցիչների միջև լավ հարաբերություններ հաստատելու համար: Միշտ հիշեք, որ ապագա սերնդին լավ դաստիարակելու համար կրթության բոլոր շահագրգիռ կողմերը պետք է ներդաշնակ հարաբերություններ ունենան:

Իսկ իմ առաջարկությունների ենթատեքստում պարզ դարձավ, որ ընտանիքում ծնողների և երեխաների արդյունավետ փոխգործակցության վրա էապես ազդում են նրանց անձնային որակները, համատեղ գործունեությունը, ծնողների մանկավարժական գիտելիքները, դաստիարակվածության մակարդակը, ազատ ժամանցի կազմակերպման կարողությունները:

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ.

- Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:
- Ուսուցիչն ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի սովորողների, վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ:
- Ուսուցիչը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ սորտորեն համագործակցելով սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների հետ:
- Ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ուն նպատակներ:
- Ուսուցիչը սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական-լուսավորչական խորհրդատվություն՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց մանկավարժական գիտելիքները:
- Ուսուցիչը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ակնկալելով նրանցից հետադարձ կապ:
- Ուսուցիչն ու սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է սովորողի ուսուցման և դաստիարակության գործընթացների վերաբերյալ որոշումներ ընդունեն համատեղ:

Կարծում եմ սույն հետազոտության ընթացքում արված արձանագրումները մեծապես կօգնեն մեզ՝ ուսուցիչներիս, կառուցողական ու բարձր որակի հարաբերություններ ստեղծել սովորողի ծնողների հետ՝ հաշվի առնելով, որ երկու կողմի նպատակն ու խնդիրը մեկն է՝ արժանի սերունդ ունենալը:

ՅՈԹ ԱԶՆԻՎ ՊԱՏԳԱՄ

Ուսուցչուհին ասաց մեզ.
-Ձեզ յոթ սեր եմ
պատգամում -
Նախ՝ Հայրենի՛ք սիրեցեք,
Ուրիշ մեծ սեր չի լինում:

Ծնողներին սիրեցեք -
Նրանցի՛ց եք ծնվել դուք:
Եվ մայր լեզուն սիրեցեք -
Նրանո՛վ եք սնվել դուք:

Բնությունը սիրեցեք -
Մա՛րդ կպահի նա միշտ ձեզ:
Ազնվությունը սիրեցեք -
Վա՛րդ կպահի նա միշտ ձեզ:

Միշտ սիրեցեք աշխատանք
Ու մեծ արվե՛ստ սիրեցեք:
Եվ այս հավերժ լուսնի տակ
Մեկին հավե՛րժ սիրեցեք...

Ով իրեն է լոկ սիրում՝
Նա դժբախտ է
աշխարհում:
Յոթ սրբություն թե
սիրեք –
Յոթնապատիկ
կսիրվեք...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կարապետյան Ի. Կ, Ընտանիք-դպրոց համագործակցություն, <<Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանքիում, 21-րդ դարի մարտահրավերները, կանխման և հաղթահարման ուղիները>>, գիտաժողովի նյութերի ժողովածու,2016թ.
2. Չատինյան Ա. «Ընտանեկան դաստիարակության հիմունքները», 2009թ.
3. Ամիրջանյան Յու., «Մանկավարժություն», 2004թ.
4. Կոմենսկի Յ.Կ. «Մեծ դիդակտիկա», 2010թ.
5. Journal of College Teaching & Learning – August 2008
6. http://mpgu.su/home/
7. www.schoolsite.am
8. https://www.teacherph.com/
9. www. education.